**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ**
**ՄԱՐԶՊԵՏ**

*<< 06 >> << մարտ >> 2015 թ*  N 33
*ք. Եղեգնաձոր*

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԲԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՈՒՄ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի առաջին կետի ա) և բ) ենթակետերի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի դատախազի 2015 թվականի փետրվարի 18-ի N 66/06դ-15 գրությունը և Եղեգիս համայնքի բնակիչ Բենիկ Հայրապետյանի 2015 թվականի փետրվարի 13-ի N 750 դիմումում բարձրացված հարցերի կարևորությունը.

**ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի բնակիչ Բենիկ Հայրապետյանի կողմից Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի դատախազին ուղղված և 2015 թվականի փետրվարի 18-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետին վերահասցեագրված դիմումում բարձրացված և հրատապ լուծում պահանջող հարցերը ուսումնասիրելու և կոնկրետ առաջարկներ ներկայացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի :

2. Հանձնաժողովին՝ հնգօրյա ժամկետում դիմումատուի և համայնքի ղեկավարի մասնակցությամբ տեղում կատարել ուսումնասիրություն և բարձրացված հարցերի վերաբերյալ ներկայացնել եզրակացություն և կոնկրետ առաջարկ::

3..Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2015 թվականի

մարտի 06 - ի N 33 կարգադրության

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի դատախազի և քաղաքացու կողմից բարձրացված և հրատապ լուծում պահանջող հարցերը ուսումնասիրելու և կոնկրետ առաջարկներ ներկայացնելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ`

1. Նորայր Սիմոնյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Անդամներ՝

2.Հայկ Կարապետյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ

3. Մեսրոպ Մեսրոպյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ

4. Զոհրաբ Շահինյան - ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի <<Գեոդեզիա և քարտեզագրում >> ՊՈԱԿ-ի գեոդեզիայի դիտարկումների և չափաբանության բաժնի պետ

5. Արսեն Խաչատրյան – ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Եղեգնաձորի բաժնի հերթապահ մասի պետ

6. Սմբատ Խլղաթյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Կ.ՍԱՀԱԿՅԱՆ